թեանց աղբիւրներու մանրամասն ցուցումներով ։ Այս գործը հասած է ցարդ **Հիւպշմանն** անունին . տպագրութիւնը մէկ կողմէն յառաջ կը տարուի , տարւոյս ընթացքին լոյս ընծայուելու համար Գ. հատորը՝ ցվերջ Մ տառի ։ Մեզ կը մնայ մաղթել ներհուն աշխատասիրողին , որ արժանի ըլլայ ի մօտոյ ողջունելու լուսապայծառ ճակատը Ֆ տառին ։



Հ. ԱՐՍԷՆ Վ. ՂԱԶԻԿԵԱՆ

* * Մխիթարեան այս երրորդութենէն դուրս, ԼԷՕ կը ներկայանայ մեզ՝ իբր խիստ ուշագրաւ դէմք մը որ մեծագոյն ծառայութիւնը մատուցած է Հայ Դպրութեան , «Հայկական Տպագրութիւն» անուն իր ընդարձակ և շահեկան հատորներով , որոնցմէ Ա.ը 1901 ին և Բ.ը 1902 ին տպուած են Թիֆլիզ , նախապէս «Մշակ»ի մէջ յօդուած առ յօդուած երևալէ վերջ ։ (Ուսանայ այս բազմահմուտ պատմագէտ - վիպասան - հրապարակագիրին կենսագրութիւնը տե՛ս «Ամենուն Տարեցոյցը» 1911) ։ Լէօի «Հայկական Տպագրութիւն»ը բոլորեն տարբեր ուղղութիւն մը ունի ։ Ո՛չ թէ բանասէրը, հապա խստապահ պատմաբանն է որ կը կանգնի մեր առջեւ , հայ տպագրական աշխարհի անցուդարձերուն մէջ խառնուելով Հայ կեանքին ալ ։ Սոյն աշխատասիրութեան գտած մեծ ընդունելութիւնն իբր շեշտող պարագայ՝ յիշենք թէ 1904ին **Երկրորդ** տպագրութեան արժանացած է ան , որուն շուրջ յարուցուած գրավէճերուն առթիւ՝ տուած իր պատասխանէն յառաջ կը բերենք քանի մը հատուած միայն . «Իմ ծրագիրն էր տալ «պատմուածքներ մեր անցեալ մտաւոր , կուլտուրական և քաղաքական կեանքից ։ Ես այս «աշխատութիւնը անուանեցի **Հայկական Տպագ-** «**րութիւն** , որովհետև տպագրութիւնն է այն առանց- «քը որի շուրջը պտոյտ են գալիս իմ պատմուածք- «ները ։ . . . Տպարանը միայն արհեստանոց չէ . նա «գրականութեան հոգին է . առանց նրան՝ անհնարին «կը լինէր երևակայել անգամ այն ամէնը , ինչ ու- «նենք այսօր ։ . . . Հետևելով մեր գրականութեան , «ես չէի կարող չը հետևել և մեր կեանքին , որովհե- «տև այդ երկուսը — կեանք և գրականութիւն — չէ կարելի բաժանել իրարից» ։



ԼԷՕ (ԱՌԱՔԵԼ ԲԱԲԱԽԱՆԵԱՆ) Ծն. 1860

* * Իսկ ՀՐԱՆՏ ԱՍԱՏՈՒՐ վերևի չորս անձերէն տարբեր մեթոտի մը հետեւած է , 1901 տարւոյն Ազգ. Հիւանդանոցի «Ընդարձակ Օրացոյց»ին մէջ հրատարակելով «Կ. Պոլսոյ Հայերը և իրենց Պատրիարքները» վերնագիրով վաւերական պատմութիւնը մեր Պատրիարքներուն ու Տեղապահներուն , չմոռնալով պատկերացունել անձնիւրին պաշտօնավարութեանը շրջանին տեղի ունեցած Տաճկահայոց կեանքը , մտաւորական ու կրթական շարժումները , Ամիրաներու բազմազան գործունէութիւնները , կրօնական պայքարները , քաղաքական հորիզոնն ու մանաւանդ Պոլսահայ տպագրական աշխարհը , — բոլորն ալ ուրոյն ուսումնասիրութեանց առարկայ դարձնելով , խղճմտօրէն դասակարգելով ու բերելով կապել մինչև 1858 թուականը ։ Հ. Ասատուր անագին ընթերցումներ ու պրպտումներ ընելու հարկադրուած է (օգտուելով անշուշտ իր սեպհականութիւնը եղող հարուստ մատենադարանէն) , այդ 181 էջերուն մէջ